

գելքով և շոգենաւներու կատարելագործութեամբ. պատմութեան նայելով՝ ուխտաւորական կեանքը շատ անգամ տաժանք մ'էր և լուրջ վտանգ մը: Ս. Յակոբեանց Միաբանութիւնը բոս կարիււտոյն ուխտաւորաց նեղութիւնները մեղմացնելու համար ճանապարհորդութեան դիւրութիւններ սուած է, յետոյ ցամաքի ճանապարհին վրայ, ինչպէս նաև Պաղեստինի ծովեզերեայ քաղաքներու մէջ ուր ուխտաւորք ցամաք կ'ենէին, Հոգեհոն աւնուով կայաններ հաստատած է հանգստաւէտ սենեակներով ու կարասիներով: Այդ կարգի կայաններ կային Հայէպ, Գամասկոս, Գազա, Ռեմլէ և ուրիշ տեղեր: Եաֆայի Հոգեհոնը կարևոր կայաններէն էր. ան՝ կը թուի ուխտաւորական նախնի թուականներէն սկսեալ հաստատուած պէտք է ըլլայ, քանի որ ուխտաւորաց մեծագոյն մասը ծովի ճանապարհով կը հասնէր Երուսաղէմ:

Ս. Նիկողայոս վանքին հիմնարկութեան թուականը մութի մէջ է. յայտնի է թէ ան հին է, բայց պատմութիւնը կը լռէ անոր ծագման մասին: Ս. Աթոռոյ միաբան Բառնարաս վրդ. Գոնա ձակեցի իր «Յայրողոսթիս Պատրիարքացն Երուսաղէմի» գիրքին մէջ (էջ 32) Աբրահամ Ա. Պատրիարքի համար հետեւեալ հատուածը ունի. «զսա յիշէ ևս այլ պատմիչ արաբացի Շէյխ իւր Համպալի ասացեալ, որ ի ճանապարհորդութեան Շէյխի ուրուսմի Մէքքէցոյ գրէ այսպէս. «Եկեալ Շէյխին ի Յոպպէ, և իջեանեալ ի վանս Հալոց յաւուրս պատրիարքի նոցա Աբրահամու. զի վանքն Յոպպէու ընդ իշխանութեամբ նորին Աբրահամու էր»: Այս Աբրահամ Ա. այն պատրիարքն է որ Էօմէր և Ալի ամիրապետներէն հրովարտակ ստացած էր և կ'ապրէր 637ին Էօմէրի Երուսաղէմը զբաւման ժամանակ. Բառնարաս վրդ. ի վերև նշանակուած Շէյխ Համպալի հատուածին մէջ կը յիշատակուի Աբրահամ առաջինը. ո՞վ էր Համպալի պատմիչը որուն նոյն հատուածին իմաստէն կը հասկցուի Յոպպէի վանքին հնութիւնը որ կը բարձրանայ մինչև է. դար: Համպալի անունն է այն իսլամ աւանդապաշտ զպրօցին զոր հիմնած էր Ահմեհ Իպն Հակպալ (* 855) և որուն հետեւողները կը կոչուէին Հակպալի. պատմիչին անունն է Միւճիր էտ-տին էլ Համպալի (* 1521), որ ունի էլ իւնս էր մեղիլ անուամբ, Երուսաղէմի և Քեփրոնի վրայ պատմական գիրք մը. ահա նոյն հեղինակն է որ է. դարուն Մէքքէցի Շէյխի մը ճամբորդութեան վրայ գրած ժամանակ կը յիշէ նոյն Շէյխին